

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 8/2

14 փետրվարի 2013թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 25.01.2013թ-ի նիստում քննության է առնվել Ա/Ձ Կարապետ Հովսեփյանի 14.01.2013թ. դիմում-բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 25.12.2012թ. թիվ 1102353 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես.

համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 23.11.2012թ. թիվ 1102353 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում Ա/Ձ Կարապետ Հովսեփյանի մոտ կատարվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու և հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 25.12.2012թ-ին կազմվել է թիվ 1102353 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 600.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

թվով 4 վարձու աշխատող՝ գանձապահ Սոֆյա Այվազյանը, հավաքարար Լեյլա Ղազարյանը և ձևավորողներ Նոնա Բեջանյանը, Հռիփսիմե Ստեփանյանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված չէին, բացակայում էին նրանց հետ կնքված գրավոր աշխատանքային պայմանագրերը կամ աշխատանքի ընդունման մասին գրավոր հրամանները: Խախտվել է ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, այն է՝ աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրի հիման վրա, ինչպես նաև կողմերի համաձայնությամբ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:

Արդյունքում ստուգման ակտով կիրառվել է «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պատասխանատվության միջոցը՝ յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար գանձման է առաջադրվել 150.000 դրամ, ընդամենը՝ 600.000 դրամ:

Ա/Ձ Կարապետ Հովսեփյանի բողոքում մասնավորապես նշված է.

2012թ-ի դեկտեմբերի 18-ին Կենտրոնի ՀՏ կողմից իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման և աշխատողի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգում: Ստուգման արդյունքում 25.12.2012թ-ին կազմվել է թիվ 1102353 ստուգման ակտը, որով արձանագրվել է 4 չձևակերպված աշխատողներ: Արձանագրվածի վերաբերյալ հայտնում եմ, որ չձևակերպված աշխատակիցներ Սոֆյա Այվազյանի և հավաքարար Լեյլա Ղազարյանի հետ կապված առարկություններ չունեն:

Ինչ վերաբերվում է ձևավորողներ Նոնա Բեջանյանին և Հռիփսիմե Ստեփանյանին, ապա հայտնում եմ, որ նրանք երբևէ չեն եղել և չէին կարող լինել իմ աշխատակիցները, քանի որ նրանք «Ֆեյշն Թայմ» ՍՊԸ-ի տնօրեն Կիոա Թորոսյանի հետ նախապես կնքված ծառայությունների մատուցման պայմանագրով նոր տարվա և վերոնշյալ ընկերության մոտ սկսվող գործունեության հետ կապված կատարում էին ձևավորման աշխատանքներ:

Ելնելով վերոգրյալից Ա/Ձ Կարապետ Հովսեփյանը խնդրում է կատարել ստուգման ակտի վերահաշվարկ՝ նվազեցնելով թվով երկու անձանց համար լրացուցիչ հաշվարկված պարտավորության չափը:

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ բողոքը հիմնավոր չէ:

Քննարկման ընթացքում ստուգումն իրականացրած պաշտոնատար անձինք նշեցին, որ Ա/Ձ Կարապետ Հովսեփյանի մոտ իրականացված ստուգման արդյունքում արձանագրվել է թվով 4 վարձու աշխատողների աշխատանքի ընդունումը « օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպելու փաստ: Մասնավորապես, գանձապահ Սոֆյա Այվազյանը, հավաքարար Լեյլա Ղազարյանը և ձևավորողներ Նոնա Բեջանյանը, Հռիփսիմե Ստեփանյանը « օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված չեն եղել՝ բացակայել է նրանց հետ կնքված գրավոր աշխատանքային պայմանագրերը կամ աշխատանքի ընդունման մասին գրավոր հրամանները:

Վերոգրյալ փաստի վերաբերյալ 18.12.2013թ-ին կազմվել են թիվ 1 և թիվ 2 արձանագրությունները, որոնք ստորագրվել են ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց և Ա/Ձ Կարապետ Հովսեփյանի կողմից:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Կարապետ Հովսեփյանի կողմից խախտվել են « Կառավարության կողմից աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները, որի համար ստուգման ակտով կիրառվել է «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» « օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պատասխանատվության միջոցը:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է բացասական եզրակացություն:

Հանձնաժողովը, վերանայելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, ինչպես նաև հաշվի առնելով Գանգատարկման խորհրդի եզրակացությունը գտնում է, որ Ա/Ձ Կարապետ Հովսեփյանի 14.01.2013թ. դիմում-բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» « օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

« ԿԱ ՊԵԿ Կենտրոնի «S 25.12.2012թ. թիվ 1102353 ստուգման ակտի 1-ին կետից նվազեցնել 480.000 դրամ:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵՂՅԱՆ